ՀԱՄԱՑԱՆՑԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԻ ՆՅՈՒԹ

Դասընթացավար՝ Ռուզաննա Ալեքսանյան
Վայոց ձորի մարզի Սարավան գյուղի հիմնական դպրոցի ուսուցիչ

Թեման՝ Համացանցի դրական և բացասական ազդեցությունը դպրոցահասակ երեխաների վրա:

ՆՊԱՏԱԿ՝

- Ձևավորել համացանցից անվտանգ օգտվելու հմտություններ
- Զարգացնել համացանցը որպես կրթական գործիք ծառայեցնելու կարողություն
- Ձևավորել տեղեկատվությունը վերլուծելու ու գնահատելու կարողություն

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

- Տարբերակի համացանցի բացասական և դրական կողմերը
- Արժևորի համացանցը որպես կրթական գործիք
- Գնահատի համացանցի կարևորությունը ուսումնական պրոցեսում

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

- ✓ Աշակերտներին ներկայացնել համացանցի դրական կողմերը: Նրանց ուշադրությունը հրավիրել համացանցի կրթական գործիքների վրա, ուղղորդել ինչպես անվտանգ օգտվել դրանցից:
- ✓ Ներկայացնել բացասական կողմերը, բերել փաստարկներ, որպեսզի խուսափեն անորակ և չճշգրտված ինֆորմացիաներից:
- ✓ Մտագրոհի միջոցով բացահայտել համացանցի դերը կրթական բնագավառում:
- ✓ T – աձև աղյուսակի միջոցով առանձնացնել համացանցի դրական և բացասական կողմերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- ✓ Աշխատել https://learningapps.org/ հարթակում, որը հնարավորություն կտա բարելավել գիտելիքները ցանկացած առարկայի շրջանակներում:

- ✓ Աշխատել https://quizizz.com հարթակում, որի շնորհիվ կամրապնդվի ուսումնասիրվող նյութը: Գործիքի օգնությամբ կգնահատվի սովորողների կողմից կատարած առաջադրանքների և՛ ճշտությունը, և՛ կատարման արագությունը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Ըստ T-աձև աղյուսակի ներկայացնել համացանցի դրական և բացասական կողմերը:

Առցանց գործիքներով միջոցով կատարել նգիտելիքների ստուգում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

- **Ինքնավարություն:** Սովորողները ավելի ինքնավար են, երբ համացանցում ինքնուրույն տեղեկություններ են փնտրում
- **Մոտիվացիա:** Սովորողները մեծ ոգևորությամբ և բարձր արդյունավետությամբ են աշխատում, երբ դասապրոսեցում կիրառվում է համացանցը:
- **Հետաքրքրություն**: Քանի որ սովորողը իր ժամանակի մեծ մասը համացանցում է անց կացնում, ապա դասապրոցեսը համացանցի միջոցով յուրացնելը մեծ հետաքրքրություն է առաջացնում:
- **Ինտերակտիվություն:** Սովորողները նախապես ուսումնասիրելով տրված թեման, կարող են տարբեր հարթակներում խմբային քննարկումների միջոցով ազատ արտահայտվել և քննարկումներ իրականացնել:
- **Հետադարձ կապ:** Սովորողները համապատասխան հարթակում ներկայացնում են աշխատանքը և ստանում ուսուցչի կողմից դիտարկումներ

ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- ✓ Համացանցից դուրս բերել տեղեկություն WorldWideWeb-ի ստեղծող բրիտանացի գիտնական Թիմ Բերներս-Լիի մասին:
- ✓ Կատարել որևէ հարցում https://wheelofnames.com/ հարթակում:



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Մանտուլենկո Վ. «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»

2.Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., ՇարխաթունյանՀ.«Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումըհանրակրթական դպրոցում»:

3.Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան Ս. Բ. «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում: Մեթոդական ուղեցույց» :

4.Антон Платов. Дети и родители Сеть. Мир компьютеров. - № 3. 2004 год.

5.Safe.am

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում: